

ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ Դ. հատորը հրատարակութեան կը յանձնեն խառն զգացումներով: 1973 տարուան ընթացքին մեծ ցաւով իմացանք մահուան բօքը ՀԱՆՐԱՅԻՆ երէց բարեկամներէն երկուքին, բազմավաստակ պատմաբան-քանասէրներ՝ Յ. Ճ. Սիրունիի եւ Հրանդ Ք. Արմէնի, որոնք հակառակ իրենց տարիքի լիութեան, տակաւին հաւատարմութեամբ կը շարունակէին սպասարկել հայոց բառ ու բանին, ու վստահօրէն տակաւին այնքան բան ունէին լոյս աշխարհ բերելիք հայ ժողովուրդի անցեալէն: Սակայն միաժամանակ հրճումներ կը պատէ մեզ ի տես երիտասարդ այն անուններուն, որոնք պատմաբանասիրութեան ասպարէզէն մերս իրենց առաջին քայլերը կ'առնեն ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ նամակ:

Անգամ մը եւս այս առիթը կ'օգտագործենք մեր անխառն շնորհակալութիւնները յայտնելու հայրենիքի ու սփիւռքի բոլոր այն մտաւորականներուն, որոնց սիրայօժար աշխատակցութիւնը միայն կարելի կը դարձնէ ՀԱՆՐԱՅԻՆ անխափան գոյատեւումը: Շնորհակալութիւն մատուցելով սփիւռքահայ ու հայրենի մամուլին, որուն ընծայած ուշադրութիւնը կը փառաբերէ մեզ առաւել հաստատակամ պահելու մեր ընթացքը:

Հաւատարմութեամբ կը շարունակենք մեր առաքելութիւնը, ու կը պահենք մեր խոստումը: ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ էջերը բաց կը մնան բոլոր անոնց, որոնք գիտեն գիտական եիմքերու վրայ մեծաւոր եւ առարկայօրէն մերկայացուած խօսքին արժէքը: